4.30.	Արդյո՞ք սննդամթերքի բաղադրության մեջ մտնող բաղադրիչները նշված են սննդամթերքի արտադրման պահի դրությամբ դրանց զանգվածային մասի նվազման կարգով: Տվյալ բաղադրիչները նշելուց անմիջապես առաջ զետեղված է «Բաղադրությունը» գրառումը:				0.1	ակնադիտական, փաստաթղթային զննում կամ լաբորատոր փորձաքննություն	ՄՄ ՏԿ 022/2011 կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.4 մասի 1-ին կետ	
4.31.	Արդյո՞ք սննդամթերքի մեջ բարդ բաղադրիչի (երկու և ավելի բաղադրիչներից կազմված) առկայության դեպքում սննդամթերքի բաղադրության մեջ նշվում է այդ բարդ բաղադրիչի բաղադրության մեջ մտնող բոլոր բաղադրիչների ցանկը, կամ նշվում է բարդ բաղադրիչը, որին փակագծերում լրացնում են բաղադրիչները՝ իրենց զանգվածային մասի նվազման կարգով: Արդյո՞ք այն բարդ բաղադրիչները, որոնց զանգվածային մասը կազմում է 2 տոկոս և դրանից պակաս, մակնշված չեն, բացառությամբ				0.1	ակնադիտական կամ փաստաթղթային զննում	ՄՄ ՏԿ 022/2011 կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.4 մասի 2-րդ և 14-րդ կետեր	

	տեխնիկական կանոնակարգով սահմանված դեպքերի:							
4.32.	Արդյո՞ք սննդամթերքի մեջ բուրավետիչի առկայության դեպքում բաղադրության մասին մականշվածքը պարունակում է «բուրավետիչ (բուրավետիչներ)» բառը:				0.1	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 022/2011 կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.4 մասի 5-րդ կետ	
4.33.	Արդյո՞ք սննդամթերքի բաղադրության մեջ սննդային հավելման առկայության դեպքում նշված է ֆունկցիոնալ (տեխնոլոգիական) նշանակությունը (թթվայնության կարգավորիչ, կայունացուցիչ, էմուլգատոր, ֆունկցիոնալ (տեխնոլոգիական) այլ նշանակություն) և սննդային հավելման անվանումը, որը կարող է փոխարինվել սննդային հավելման ինդեքսով՝ Համարակալման միջազգային համակարգի (INS) կամ Համարակալման եվրոպական համակարգի (E) համաձայն: Եթե սննդային հավելումն ունի զանազան ֆունկցիոնալ նշանակություններ, ապա նշվում է դրա օգտագործման նպատակին համապատասխանող ֆունկցիոնալ նշանակությունը: Արդյո՞ք սննդամթերքի բաղադրության մեջ նշվում է սննդամթերքի արտադրության ժամանակ որպես բաղադրիչ օգտագործվող ածխածնի երկօքսիդը՝ սննդամթերքի մականշվածքի մեջ «Գազավորված» կամ համանման գրառման բացակայության դեպքում:				0.1 0.1	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 022/2011 կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.4 մասի 6-րդ կետ	
4.34.	Արդյո՞ք այն սննդամթերքի մականշվածքը, որի բաղադրության մեջ մտնում են քաղցրացուցիչներ՝ շաքարասպիրտներ, սննդամթերքի բաղադրությունը նշելուց անմիջապես հետո լրացված է հետևյալ գրառմամբ՝ Պարունակում է քաղցրացուցիչ (քաղցրացուցիչներ):				0.1	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 022/2011 կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.4 մասի 12-րդ կետ	

	Արդյո՞ք չափից ավելի օգտագործման դեպքում կարող է (կարող են) ունենալ թուլացնող ազդեցություն:							
4.35.	Արդյո՞ք բաղադրության մեջ ասպարտամի կամ ասպարտամ-ացեսուլֆամի աղի առկայության դեպքում մակնշվածքում առկա է «Պարունակում է ֆենիլալանինի աղբյուր» գրառումը:				0.1	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 022/2011 կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.4 մասի 15-րդ կետ	
4.36.	Արդյո՞ք բաղադրիչները (այդ թվում՝ սննդային հավելումները, բուրավետիչները), կենսաբանական ակտիվ հավելումները, որոնց օգտագործումը կարող է առաջացնել ալերգիկ ռեակցիաներ կամ հակացուցված է հիվանդությունների առանձին տեսակների դեպքում, նշվում են սննդամթերքի բաղադրության մեջ՝ անկախ դրանց քանակությունից:				0.1	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 022/2011 կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.4 մասի 13-րդ և 14-րդ կետեր	
4.37.	Արդյո՞ք ներկանյութեր (ազոռուբին E122, դեղին քինոլինային E104, դեղին «արևի մայրամուտ» FCF E110, կարմիր հմայիչ AC E129, պոնսո 4R E124 և տարտրազին E102) պարունակող սննդամթերքի համար առկա է նախազգուշացնող գրառում. պարունակում է ներկանյութ (ներկանյութեր), որը (որոնք) կարող է (կարող են) բացասական ազդեցություն ունենալ երեխաների ակտիվության և ուշադրության վրա:				0.1	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 022/2011 կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.4 մասի 18-րդ կետ	
4.38.	Արդյո՞ք սննդանյութերի, այդ թվում՝ սպիտակուցների, ճարպերի, ածխաջրերի քանակությունը սննդամթերքում նշված է գրամով կամ նշված մեծությունների պատիկով կամ մասով արտահայտված միավորներով:				0.1	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 022/2011 կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.9 մասի 5-րդ կետ	
4.39.	Արդյո՞ք սննդամթերքում վիտամինների և հանքային նյութերի քանակությունը նշված է Միավորների միջազգային համակարգում (ՁՀ) նշված մեծությունների միավորներով (միլիգրամներով կամ				0.1	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 022/2011 կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.9 մասի 6-րդ կետ	

	միկրոգրամներով) կամ ԵԱՏՄ անդամ պետություններում կիրառման համար թույլատրված այլ մեծությունների միավորներով՝ ԵԱՏՄ անդամ պետությունների՝ չափումների միասնականության ապահովման ոլորտի օրենսդրությանը համապատասխան:							
4.40.	Արդյո՞ք այն սննդամթերքի համար, որն ստացվել է գենաձևափոխված միկրոօրգանիզմներից (մանրէներից, խմորասնկերից և միցելային սնկերից, որոնց գենետիկ նյութը փոփոխված է գենային ինժեներիայի մեթոդների կիրառմամբ) (այսուհետ՝ ԳՁՄ) կամ ստացվել է այդ միկրոօրգանիզմների օգտագործմամբ, պարտադիր նշված է հետևյալ տեղեկատվությունը՝ - կենդանի ԳՁՄ-ներ պարունակող մթերքների համար՝ «Մթերքը պարունակում է կենդանի գենաձևափոխված միկրոօրգանիզմներ». - ոչ կենսունակ ԳՁՄ-ներ պարունակող մթերքների համար՝ «Մթերքն ստացվել է գենաձևափոխված միկրոօրգանիզմների օգտագործմամբ». - տեխնոլոգիական ԳՁՄ-ներից մաքրված մթերքների կամ ԳՁՄ-ներից մաքրված բաղադրիչների օգտագործմամբ ստացված մթերքների համար՝ «Մթերքը պարունակում է բաղադրիչներ, որոնք ստացվել են գենաձևափոխված միկրոօրգանիզմների օգտագործմամբ»:				0.1 0.1 0.1	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 022/2011 կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.11 մասի 4-րդ կետ	
4.41.	Արդյո՞ք շրջանառության մեջ դնելուց առաջ կենդանական ծագման չվերամշակված սննդամթերքը ենթարկված է անասնաբուժասանիտարական փորձաքննության և ուղեկցվում է անվտանգությունը հավաստող տեղեկություններ պարունակող փաստաթղթերով:				0.8	ակնադիտական կամ փաստաթղթային զննում	«Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մաս, ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 30-րդ հոդվածի 1-ին կետ	

4.42.	Արդյո՞ք «Պատրաստման ամսաթիվը» բառերից հետո նշվում է սննդամթերքի պատրաստման ամսաթիվը կամ սպառողական փաթեթվածքի վրա այդ ամսաթիվը նշելու տեղը:				0.1	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 022/2011 կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.6 մասի 2-րդ կետ	
4.43.	Արդյո՞ք «Պիտանի է մինչև», «պիտանի է», «պիտանի է մինչև... ավարտը» բառերից հետո նշված է կա՛մ սննդամթերքի պիտանիության ժամկետը, կա՛մ փաթեթվածքի վրա այդ ժամկետը նշելու տեղը:				0.1	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 022/2011 կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.7 մասի 3-րդ կետ	
4.44.	Արդյո՞ք այն սննդամթերքի մականշվածքը, որի համար արտադրողը սահմանում է պիտանիության անսահմանափակ ժամկետ, լրացված է «Պիտանիության ժամկետը անսահմանափակ է պահպանման պայմաններին հետևելու դեպքում» գրառմամբ:				0.1	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 022/2011 կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.7 մասի 4-րդ կետ	
4.45.	Արդյո՞ք արտադրվող աշխարհագրական նշումով, ծագման տեղանունով և երաշխավորված ավանդական արտադրանքի մակնշմամբ արտադրանքը գրանցված է:				0.1	ակնադիտական զննում, փաստա-թղթային զննում	«Աշխարհագրական նշումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ մաս	
4.46.	Արդյո՞ք առկա սննդամթերքը տեխնիկական կանոնակարգման օբյեկտների շարքին դասելու նպատակով նույնական է՝ ըստ անվանման կամ տեսողական մեթոդով կամ զգայորոշման մեթոդով կամ վերլուծական մեթոդով				0.1	ակնադիտական զննում, փաստա-թղթային զննում կամ լաբորատոր փորձաքննություն	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 17-րդ հոդված	
4.47.	Արդյո՞ք արտադրվող սննդամթերքը ենթարկված է համապատասխանության գնահատման (հավաստումն) հետևյալ ձևով՝ 1) սննդամթերքի համապատասխանության հավաստման (հայտարարագրման), 2) հատուկ նշանակության սննդամթերքի պետական գրանցման, 3) նոր տեսակի սննդամթերքի պետական գրանցման,				0.2 0.2 0.2 0.2	փաստաթղթային զննում	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 21-րդ հոդվածի 1-ին մաս	

	4) անասնաբուժասանի-տարական փորձաքննության:							
5.	**ՀՈՒՄՔԻ ԵՎ ՊԱՏՐԱՍՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ**							
5.1.	Արդյո՞ք արտադրությունում չի իրացվում պարենային (սննդային) հումք, անկախ այն հանգամանքից, թե պիտանիության ժամկետի նշումը որ լեզվով է կատարված, եթե՝ 1) պիտանիության ժամկետն անցած է. 2) փաթեթավորման կամ տարայի վրա պիտանիության ժամկետը բացակայում է կամ ընթեռնելի չէ. 3) ժամկետը կրկնակի մակնշված է կամ բնօրինակ պիտանիության ժամկետը ջնջված է, և նշված է պիտանիության նոր ժամկետ:				0.4 0.3 0.3	ակնադիտական զննում	«Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մաս	
5.2.	Արդյո՞ք ընդունվող հումքը համապատասխանում է դրանց անվտանգության պահանջներին և ունի անվտանգությունը հավաստող (հիմնավորող) փաստաթղթեր:				0.5	ակնադիտական և փաստաթղթային զննում, լաբորատոր փորձաքննություն	«Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մաս	
5.3.	Արդյո՞ք սննդամթերքը, այդ թվում՝ պարենային (սննդային) հումքը ուղեկցվում են տվյալ արտադրանքի հետագծելիությունն ապահովող՝ ապրանքաուղեկից փաստաթղթերով:				0.8	փաստաթղթային զննում	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 5-րդ հոդվածի 3-րդ կետ	
5.4.	Արդյո՞ք սննդամթերքում առկա չէ մարդու և կենդանիների առողջության համար վտանգ ներկայացնող՝ վարակիչ, մակաբուծային հիվանդությունների հարուցիչներ, դրանց տոքսիններ:				1	փաստաթղթային զննում կամ լաբորատոր փորձաքննություն	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 7-րդ հոդվածի 5-րդ կետ	
5.5.	Արդյո՞ք պատրաստողները վարում և պահում են սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացում անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացման վերաբերյալ փաստաթղթերը՝ ներառյալ կենդանական ծագման չմշակված պարենային (սննդային) հումքի անվտանգությունը հավաստող փաստաթղթերը՝ թղթային կամ				0.4	փաստաթղթային զննում	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 11-րդ հոդվածի 4-րդ կետ	

	տեղեկատվության էլեկտրոնային կրիչներով: Արդյո՞ք կենդանական ծագման չմշակված պարենային (սննդային) հումքի անվտանգությունը հավաստող փաստաթղթերը պահպանվում են դրանց տրման օրվանից երեք տարվա ընթացքում:							
5.6.	Արդյո՞ք չի արտադրվում վտանգավոր և կեղծված սննդամթերք, սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող վտանգավոր նյութեր:				0.8	ակնադիտական, փաստաթղթային զննում կամ լաբորատոր փորձաքննություն	«Սննդամթերքի անվտանգության մասին» օրենք 20-րդ հոդվածի 1-ին մաս	
6.	**ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ**							
6.1.	Արդյո՞ք սննդամթերքի արտադրությունը (բացառությամբ հանրային սննդի), տեխնոլոգիական գործելակարգը (ռեժիմը) և տեխնոլոգիական գործընթացը իրականացվում է տվյալ սննդամթերքի համար արտադրողի հաստատած տեխնոլոգիական հրահանգին համապատասխան:				0.4	փաստաթղթային զննում	«Սննդամթերքի անվտանգության մասին» օրենք 8-րդ հոդված, 1-ին մաս	
6.2.	Արդյո՞ք արտադրվող սննդամթերքի տեխնոլոգիական հրահանգները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված տեխնոլոգիական հրահանգին ներկայացվող պահանջներին:				0.4	փաստաթղթային զննում	Հայաստանի Հանրապետության կառավարության 28.06.2007 թ. N 885-Ն որոշում 5-րդ կետ	
6.3.	Արդյո՞ք մինչև մեկ տարեկան երեխաների մանկական սննդի համար նախատեսված սննդամթերքի արտադրությունը (պատրաստումը) իրականացվում է մասնագիտացված արտադրական օբյեկտներում կամ մասնագիտացված արտադրամասերում կամ մասնագիտացված տեխնոլոգիական գծերի վրա:				0.4	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 7-րդ հոդվածի 10-րդ կետ	
6.4.	Արդյո՞ք սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացների իրականացման ժամանակ, արտադրողի (պատրաստողը) կողմից մշակվել, իրականացվում և					Փաստաթղթային ակնադիտական, զննում	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 10-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետեր	

	պահպանվում է վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի (ՎՎՀԿԿ) (անգլերեն տարբերակը՝ HACCP — Hazard Analysis and Critical Control Points) սկզբունքների վրա հիմնված ընթացակարգերը՝ 1) սննդամթերքի անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտ սննդամթերքի արտադրության (պատրաստման) տեխնոլոգիական գործընթացների ընտրություն.				0.5			
	2) սննդամթերքի արտադրության (պատրաստման) տեխնոլոգիական գործառնությունների հաջորդականության և հոսքայնության ընտրություն՝ պարենային (սննդային) հումքի և սննդամթերքի աղտոտումը բացառելու նպատակով.				0.3			
	3) տեխնոլոգիական գործառնությունների և սննդամթերքի արտադրության (պատրաստման) փուլերում սննդամթերքի վերահսկելի փուլերի սահմանում արտադրական հսկողության ծրագրերում.				0.3			
	4) սննդամթերքի արտադրության (պատրաստման) ընթացքում օգտագործվող պարենային (սննդային) հումքի, տեխնոլոգիական միջոցների, փաթեթավորման նյութերի, արտադրատեսակի, ինչպես նաև սննդամթերքի նկատմամբ հսկողության իրականացում՝ անհրաժեշտ հուսալի և համալիր հսկողություն ապահովող միջոցներով.				0.3			
	5) տեխնոլոգիական սարքավորումների սարքինության նկատմամբ							

	հսկողության իրականացում ՄՄ ՏԿ 021/2011 տեխնիկական կանոնակարգով կամ Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին համապատասխան սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացն ապահովող կարգով.				0.2			
	6) տեխնոլոգիական գործառնությունների վերահսկելի փուլերի և սննդամթերքի նկատմամբ իրականացված հսկողության արդյունքների մասին տեղեկատվության փաստաթղթավորման ապահովում.				0.2			
	7) սննդամթերքի պահպանման և փոխադրման (տրանսպորտային փոխադրման) պայմանների պահպանում.				0.2			
	8) սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացում օգտագործվող արտադրական շինությունների, տեխնոլոգիական սարքավորումների և գույքի պահպանում՝ սննդամթերքի աղտոտումը բացառող պայմաններում.				0.2			
	9) սննդամթերքի անվտանգության ապահովման նպատակով աշխատողների կողմից անձնական հիգիենայի ձևերի ընտրություն և դրանց կանոնների պահպանման ապահովում.				0.4			
	10) սննդամթերքի անվտանգության ապահովման եղանակների ընտրություն, սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացում օգտագործվող արտադրական շինությունների,				0.3			

	տեխնոլոգիական սարքավորումների և գույքի մաքրման, լվացման, ախտահանման, միջատազերծման և կրծողների ոչնչացման գործընթացների պարբերականության սահմանում և դրանց իրականացում. 11) ՄՄ ՏԿ 021/2011 տեխնիկական կանոնակարգով և Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին արտադրված սննդամթերքի համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի վարում ու պահպանում՝ թղթային կամ էլեկտրոնային կրիչներով. 12) սննդամթերքի հետագծելիություն:				0.4 0.8			
7.	**ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**							
7.1.	Արդյո՞ք մանկական սննդի համար նախատեսված սննդամթերքի, հղիների և կերակրող մայրերի համար նախատեսված սննդամթերքի արտադրության (պատրաստման) ժամանակ չի օգտագործվում ԳՁՕ պարունակող պարենային (սննդային) հումք:				0.1	փաստաթղթային զննում կամ լաբորատոր փորձաքննություն	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 8-րդ հոդվածի 1-ին կետ	
7.2.	Արդյո՞ք մանկական սննդի համար նախատեսված սննդամթերքի արտադրության ժամանակ չի օգտագործվում թունաքիմիկատների (պեստիցիդների) օգտագործմամբ ստացված պարենային (սննդային) հումք:				0.1	փաստաթղթային զննում կամ լաբորատոր փորձաքննություն	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 8-րդ հոդվածի 1-ին կետ, 10-րդ հավելված	
7.3.	Արդյո՞ք մանկական սննդի համար նախատեսված սննդամթերքը համապատասխանում է հետևյալ պահանջներին. մանկական սննդի համար նախատեսված թխվածքաբլիթը չի պարունակում				0.1	փաստաթղթային զննում կամ լաբորատոր փորձաքննություն	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 8-րդ հոդվածի 4-րդ կետ	

	25 տոկոսից ավելի ավելացված շաքար. մանկական սննդի համար նախատեսված հացաբուլկեղենը չի պարունակում 0.4 տոկոսից ավելի աղ:							
7.4.	Արդյո՞ք մանկական սննդի համար նախատեսված սննդամթերքը չի պարունակում. 0.2 տոկոսից ավելի էթիլային սպիրտ. բնական սուրճ. ծիրանի կորիզի միջուկ. քացախ. քաղցրացնող նյութեր՝ բացառությամբ դիետիկ բուժիչ և դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված հատուկ նշանակության սննդամթերքի:				0.1 0.1 0.1 0.1 0.1	փաստաթղթային զննում կամ լաբորատոր փորձաքննություն	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 8-րդ հոդվածի 5-րդ կետ	
7.5.	Արդյո՞ք 0-3 տարեկան երեխաների համար նախատեսված սննդամթերքը մայրական կաթի փոխարինիչներում չի պարունակում ճարպաթթուների ընդհանուր պարունակության 4 տոկոսից ավելի քանակությամբ ճարպաթթուների տրանս իզոմերներ:				0.1	փաստաթղթային զննում կամ լաբորատոր փորձաքննություն	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 8-րդ հոդվածի 6-րդ կետ	
7.6.	Արդյո՞ք մանկական սննդի համար նախատեսված սննդամթերքի արտադրության (պատրաստման) ժամանակ չի օգտագործվում բենզոյական, սորբինային թթուներ և դրանց աղերը:				0.1	փաստաթղթային զննում կամ լաբորատոր փորձաքննություն	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 8-րդ հոդվածի 7-րդ կետ	
7.7.	Արդյո՞ք 0-3 տարեկան երեխաների սննդի համար նախատեսված սննդամթերքի արտադրության (պատրաստման) ժամանակ չեն օգտագործվում պարենային (սննդային) հումքի հետևյալ տեսակները. 1) Թերների սանդղակի 150 աստիճանից ավելի թթվայնությամբ կաթնաշոռ, 2) սոյայի ալյուր (բացի սոյայի սպիտակուցի իզոլյատից և խտանյութից (կոնցենտրատից)), 3) վնասատուներով վարակված և կողմնակի խառնուրդներով ու վնասատուներով աղտոտված հացահատիկ և դրա				0.1 0.1 0.1	ակնադիտական, փաստաթղթային զննում կամ լաբորատոր փորձաքննություն	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 8-րդ հոդվածի 8-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ և 26-րդ ենթակետեր	

	վերամշակումից ստացվող մթերքներ, 4) մթերատու կենդանիների և թռչնի սպանդի մթերք՝ կրկնակի սառեցման ենթարկված, 5) հումք ձկից և արդյունագործության ոչ ձկնային օբյեկտներից՝ կրկնակի սառեցման ենթարկված, 6) մթերատու կենդանիների միս՝ մեխանիկական եղանակով ոսկրահանված, և թռչնի միս՝ մեխանիկական եղանակով ոսկրահանված, 7) սոսնձանյութ (կոլագեն) պարունակող հումք՝ թռչնի մսից, 8) մթերատու կենդանիների և թռչնի ենթամթերք՝ բացառությամբ լյարդի, լեզվի և արյան, 9) տավարի միս՝ ջլազերծված, շարակցական և ճարպային հյուսվածքի 12 տոկոսից ավելի զանգվածային բաժնով, 10) խոզի միս՝ ջլազերծված, ճարպային հյուսվածքի 32 տոկոսից ավելի զանգվածային բաժնով, 11) ոչխարի միս՝ ջլազերծված, ճարպային հյուսվածքի 9 տոկոսից ավելի զանգվածային բաժնով, 12) 2-րդ կատեգորիայի ճտի և բրոյլեր-ճուտիկների մսեղիքներ, 13) բլոկներ, սառեցված, կենդանիների տարբեր տեսակի ջլազերծված մսից, ինչպես նաև ենթամթերքից (լյարդ, լեզու, սիրտ)՝ 6 ամսից ավելի պիտանիության ժամկետով, 14) ցլերի, արու խոզերի և հյուծված կենդանիների միս, 15) ձկնաբուծարաններում աճեցված ձկից և ձկների հատակամերձ ցեղատեսակներից ստացվող ձկնային հումք, 16) ջրային թռչունների ձու և միս, 17) սփրեդներ, 18) կարագ՝ սերուցքային, աղի, 19) բուսական յուղեր՝ բամբակի, քնջութի, 20) ակտիվ թթվածնի/կգ ճարպի 2 մմոլից ավելի գերօքսիդացման թիվ ունեցող բուսական յուղեր				0.1 0.1 0.1 0.1 0.1 0.1 0.1 0.1 0.1 0.1 0.1 0.1 0.1 0.1 0.1 0.1			

	(բացառությամբ ձիթապտղի յուղի). ակտիվ թթվածնի/կգ ճարպի 2 մմոլից ավելի գերօքսիդացման թիվ ունեցող ձիթապտղի յուղ, 21) խտացրած հյութեր՝ դիֆուզիոն եղանակով ստացված, 22) համեմունքներ (բացառությամբ սամիթի, մաղադանոսի, նեխուրի, չամանի, ռեհանի, քաղցր, սպիտակ և բուրավետ պղպեղի, սուսամբարի (օրեգանոյի), դարչնի, վանիլի, գինձի, մեխակի, դափնետերևի, ինչպես նաև՝ սոխի, սխտորի, որոնց պարունակությունը սահմանվում է պատրաստողի կողմից), 23) ձվի փոշի (արագ փչացող սննդամթերքի համար), 24) ջրածնավորված (հիդրոգենացված) յուղեր և ճարպեր, հագեցած ճարպաթթուների բարձր պարունակությամբ ճարպեր, 25) կծու համեմանքներ (պղպեղ, ծովաբողկ, մանանեխ), 26) մայոնեզ, մայոնեզային սոուսներ, բուսական յուղերի հիմքով սոուսներ, բուսական յուղերի հիմքով կրեմներ, հատուկ նշանակության ճարպեր, տապակման համար ճարպ:				0.1 0.1 0.1 0.1 0.1 0.1			
7.8.	Արդյո՞ք նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների համար մանկական սննդի համար նախատեսված սննդամթերքի արտադրության (պատրաստման) ժամանակ չեն օգտագործվում պարենային (սննդային) հումքի սահմանված տեսակները: 1) մթերատու կենդանիների և թռչնի սպանդի մթերք՝ կրկնակի սառեցման ենթարկված, 2) հումք ձկից և արդյունագործության ոչ ձկնային օբյեկտներից՝ կրկնակի սառեցման ենթարկված, 3) մթերատու կենդանիների միս՝ մեխանիկական եղանակով ոսկրահանված, և թռչնի միս՝				0.1 0.1 0.1	ակնադիտական, փաստաթղթային զննում կամ լաբորատոր փորձաքննություն	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 8-րդ հոդվածի 9-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ և 16-րդ ենթակետեր	

	մեխանիկական եղանակով ոսկրահանված, 4) սոսնձանյութ (կոլագեն) պարունակող հումք՝ թռչնի մսից, 5) սառեցված բլոկներ՝ կենդանիների տարբեր տեսակի ջլազերծված մսից, ինչպես նաև ենթամթերքից (լյարդ, լեզու, սիրտ)՝ 6 ամսից ավելի պիտանիության ժամկետով, 6) տավարի միս՝ ջլազերծված, շարակցական և ճարպային հյուսվածքի 20 տոկոսից ավելի զանգվածային բաժնով, 7) խոզի միս՝ ջլազերծված, ճարպային հյուսվածքի 70 տոկոսից ավելի զանգվածային բաժնով, 8) ոչխարի միս՝ ջլազերծված, ճարպային հյուսվածքի 9 տոկոսից ավելի զանգվածային բաժնով, 9) ցլերի, արու խոզերի և հյուծված կենդանիների միս, 10) մթերատու կենդանիների և թռչնի ենթամթերք՝ բացառությամբ լյարդի, լեզվի և արյան, 11) ջրային թռչունների ձու և միս, 12) խտացրած հյութեր՝ դիֆուզիոն եղանակով ստացված, 13) ակտիվ թթվածնի/կգ ճարպի 2 մմոլից ավելի գերօքսիդացման թիվ ունեցող բուսական յուղեր (բացառությամբ ձիթապտղի յուղի). ակտիվ թթվածնի/կգ ճարպի 2 մմոլից ավելի գերօքսիդացման թիվ ունեցող ձիթապտղի յուղ, 14) բուսական յուղեր՝ բամբակի, 15) ջրածնավորված յուղեր և ճարպեր, 16) կծու համեմանքներ (պղպեղ, ծովաբողկ, մանանեխ):				0.1 0.1 0.1 0.1 0.1 0.1 0.1 0.1 0.1 0.1 0.1 0.1			
7.9.	Արդյո՞ք 3-ից մինչև 14 տարեկան երեխաների համար կենսաբանական ակտիվ սննդային հավելումների և վաղ տարիքի երեխաների համար խոտաբույսերից պատրաստված մանկական ըմպելիքների				0.5	ակնադիտական, փաստաթղթային զննում կամ լաբորատոր փորձաքննություն	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 8-րդ հոդվածի 10-րդ կետ, 8-րդ հավելված	

	(խոտաբույսերից թեյերի) արտադրության (պատրաստման) ժամանակ օգտագործվում թույլատրված բուսական հումք:							
7.10.	Արդյո՞ք 0-3 տարեկան երեխաների համար մանկական սննդի համար նախատեսված սննդամթերքի արտադրության (պատրաստման) ժամանակ օգտագործվում է թույլատրված վիտամիններ և հանքային աղեր:				0.8	ակնադիտական, փաստաթղթային զննում կամ լաբորատոր փորձաքննություն	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 8-րդ հոդվածի 11-րդ կետ, 9-րդ հավելված	
7.11.	Արդյո՞ք բոլոր տարիքային խմբերի երեխաների համար մանկական սննդի համար նախատեսված սննդամթերքի արտադրության (պատրաստման) ժամանակ՝ յուրահատուկ հոտ և համ հաղորդելու նպատակով օգտագործվում է միայն բնական սննդային համաբուրավետիչներ (համաբուրավետիչ նյութեր) և 4 ամսականից բարձր տարիքի երեխաների համար՝ նաև վանիլին:				0.8	ակնադիտական, փաստաթղթային զննում կամ լաբորատոր փորձաքննություն	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 8-րդ հոդվածի 12-րդ կետ	
8.	**ՏՈՆՈՒՍԸ ԲԱՐՁՐԱՑՆՈՂ ԸՄՊԵԼԻՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**							
8.1.	Արդյո՞ք որպես տոնուսը բարձրացնող նյութերի (բաղադրիչների) աղբյուր օգտագործվում է կոֆեին և կոֆեին պարունակող բույսեր (բուսական լուծամզվածքներ), թեյ, սուրճ, գուարանա, մատե, ինչպես նաև դեղաբույսեր և դրանց լուծամզվածքները, որոնք ունեն տոնուսը բարձրացնող հատկություն (մարդարմատ, լեուզելա, ռադիոլա վարդագույն, կիտրոնաթուփ, էլեուտերոկոկ): Տոնուսը բարձրացնող ոչ ալկոհոլային ըմպելիքների բաղադրության մեջ օգտագործվում է տոնուսը բարձրացնող երկու նյութերից (բաղադրիչներից) ոչ ավելի, տոնուսը բարձրացնող թույլ ալկոհոլային խմիչքներում՝ մեկից ոչ ավելի:				0.5	փաստաթղթային զննում կամ լաբորատոր փորձաքննություն	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 9-րդ հոդվածի 2-րդ պարբերություն	

8.2.	Արդյո՞ք տոնուսը բարձրացնող ըմպելիքների արտադրության (պատրաստման) ժամանակ օգտագործվում է հանքային նյութեր, դյուրամարս ածխաջրեր, վիտամիններ և վիտամինանման նյութեր, էներգետիկ նյութափոխանակության հիմնանյութեր (սուբստրատներ) և խթանիչներ:				0.3	փաստաթղթային զննում կամ լաբորատոր փորձաքննություն	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 9-րդ հոդվածի 3-րդ պարբերություն	
8.3.	Արդյո՞ք տոնուսը բարձրացնող ըմպելիքներում կոֆեինի պարունակությունը չի գերազանցում 400 մգ/դմ3-ը:				0.3	փաստաթղթային զննում կամ լաբորատոր փորձաքննություն	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 9-րդ հոդվածի 4-րդ պարբերություն	

1.	«Այո»՝ առկա է. համապատասխանում է. բավարարում է («Այո»՝ նշվում է հարցում ներառված պահանջների կեսի և կեսից ավելիի դրական պատասխանի դեպքում. որը չի կշռավորվում)	V		
2.	«Ոչ»՝ ոչ. առկա չէ. չի համապատասխանում. չի բավարարում («Ոչ»՝ նշվում է հարցում ներառված պահանջների՝ մինչև կեսի դրական պատասխանի դեպքում. որը կշռավորվում է)		V	
3.	«Չ/Պ»՝ չի պահանջվում. չի վերաբերվում			V

Ստուգաթերթը կազմվել է հետևյալ նորմատիվ իրավական ակտերի հիման վրա՝

1. Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 880 որոշմամբ հաստատված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ
2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 20-ի N 34-Ն որոշում
3. «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենք
4. «Անասնաբուժության մասին» օրենք
5. Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 881 որոշմամբ հաստատված «Սննդամթերքի մակնշման մասին» (ՄՄ ՏԿ 022/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ
6. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի N 885-Ն որոշում
7. «Աշխարհագրական նշումների մասին» օրենք:

ՍԱՏՄ ծառայող _____ Տնտեսավարող _____
(ստորագրությունը) (ստորագրությունը)

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

17.10.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ